ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 287 - Ա

«ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ԾԱՂԿԱՁՈՐՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Տնտեսական լրագրողների ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 29,376,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Ծաղկաձորում անտառային հրդեհների նկատմամբ կայունության բարձրացման» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Տնտեսական լրագրողների ակումբ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02567058) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ավագ շին 1» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 03024889) 2024 թվականի մարտի 14-ին կնքված՝ N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կամավորական հրշեջ-փրկարարական հենակետի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 28,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Թրասթ աուդիտ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01569408) 2024 թվականի մարտի 14-ին կնքված՝ N Ա-17/24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 576,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Տնտեսական լրագրողների ակումբ» հասարակական կազմակերպությանը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

22.04.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ